ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ ԿԱՑԱՐՎԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Օգոստոսի 10-ին, կիրակի օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Սպիտակ քաղաքում տեղի ունեցավ Ս. Հարություն եկեղեցու հիմնաքարերի օծման և հիմնարկեքի արարողությունը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի միաբանության անդամներ, Հայաստանի Թեմական Առաջնորդներ, ինչպես նաև Ս. Էջմիածնում անցկացվող ժողովին մասնակցող Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան Թեմի Հայոց Առաջնորդ Տ. Վազգեն Արքեպիսկոպոս Հովսեփյանը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից մասնակցող պատվիրակության անդամները՝ Տ. Զարեհ Արքեպ. Ազնավորյանը, Տ. Օշական Եպս. Զոլոյանը, և Պրն. Խաչիկ Պապիկյանը:

Վեհափառ Հայրապետին, Հոգևոր դասին և այլ պատվավոր հյուրերին Լոռու և Արագածոտնի մարզի սահմանագծում ջերմորեն դիմավորեցին Լոռու մարզպետ Վիգեն Խաչատրյանը, Սպիտակի քաղաքապետ Սուրեն Ավետիսյանը, Գուգարաց Թեմի Առաջնորդ Տ. Սեպուհ Եպս. Զուլչյանը և այլ պաշտոնյաներ:

Արարողության ընթացքում Վեհափառ Հայրապետի ձեռամբ սրբալույս մյուռոնով օծվեցին 16 հիմնաքարերը, որոնք խորհրդանշում են Քրիստոսի վարդապետությունը տարածող չորս ավետարանիչներին, առաքյալներին և Ս. Գրիգոր Լուսավորչին: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության խոսքն ասաց Սպիտակի բնակիչներին և ներկա հյուրերին. *«Ձեզ հետ եմ Քե՛զ ձեր նեղության և Քե՛զ ուրախության օրերին: Եղել եմ ձեզ հետ ձեր աղետի, սուգի և ցավի օրերին. այսօր ձեզ հետ եմ ձեր հոգևոր և ազգային ուրախության այս բացառիկ առիթով: Ուզում եմ մասնակից դառնալ Սպիտակի կառուցմանը՝ ուժերիս ներածին չափով: Ճիշտ է, մահը եկավ, վիշտը պատեց մեզ, բայց մենք եղել ենք ապրելու համար, մենք կոչված ենք ոչ թե մահվան մասին մտածելու, այլ մենք ստացել ենք Աստծուց կյանք՝ այն իմաստավորված ձևով ապրելու համար: Անմահության գաղափարը պիտի շնչավորվի սպիտակցիների հոգում, մենք պիտի մնանք հարատևող ժողովուրդ»*:

Այնուհետև Գուգարաց Թեմի Առաջնորդ Տ. Սեպուհ Եպս. Զուլչյանը ամփոփ կերպով ներկայացրեց սպիտակցիների ապրած տառապանքի և անդադրում պայքարի, հոգևոր վերազարթոնքի և, վերջապես, վերածնունդյան պատմական դրվագները: Այս ամենը, գրավոր շարադրված թղթի վրա, կնքվեց Գարեգին Ա Կաթողիկոսի, Լոռու մարզպետի և Սպիտակի քաղաքապետի ու Թեմական Առաջնորդի ստորագրություններով, ապա ամփոփվեց պահպանակի մեջ և տեղադրվեց եկեղեցու հիմքում:

Հիմնարկեքի ծիսակատարությունից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց Սպիտակում կառուցվող քաղաքային մշակույթի պալատին հատկացված, ինչպես նաև 1988 թ. ավերիչ երկրաշարժից զոհվածների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի շինարարական տարածքներ: